ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական համակարգչային համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման և սպասարկման մասին» 2003 թ. փետրվարի 14-ի թիվ 03/019 պայմանագրում լրացում և փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան « 1 » հուլիսի 2017 թ.

Իրավական Տեղեկատվական Կենտրոն ՓԲԸ-ն, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն, ի դեմս տնօրեն Ռոբերտ Ավագյանի, այսուհետ՝ ԿԵՆՏՐՈՆ, մի կողմից և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Մ. Գրիգորյանի, այսուհետ՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթները կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին՝

1. Կողմերի միջև 2003թ. փետրվարի 14-ին կնքված «ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական համակարգչային համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման և սպասարկման մասին» թիվ 03/019 պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Պայմանագրի 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ներդրված համակարգի առաջին օրինակի ամսական սպասարկման գինը՝ ներառյալ հարկերը, կազմում է 10000 (տասը հազար) դրամ: Համակարգի երկրորդ և երրորդ օրինակներից յուրաքանչյուր օրինակի ամսական սպասարկման գինը՝ ներառյալ հարկերը, կազմում է 5000 (հինգ հազար) դրամ:

Համակարգի երեք օրինակների ամսական սպասարկման գինը՝ ներառյալ հարկերը, կազմում է 20000 (քսան հազար) դրամ:»:

բ) Պայմանագրի 4-րդ բաժինը լրացնել նոր՝ 4.4 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.4. Կենտրոնի շրջանառության հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելու դեպքում 4.2 կետով ծառայության համար սահմանված վճարներին գումարվում է այդ գումարների նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ն:»:

2. Սույն Համաձայնագիրը ստորագրված է երկու օրինակից (յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ):

3. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմերի հասցեները և ստորագրությունները.

ԿԵՆՏՐՈՆ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ («ԻՐՏԵԿ») ՓԲԸ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Իրավ հասցե՝ ք. Երևան, Աբովյան 36 Գործ հասցե՝ ք. Երևան, Ա. Ավետիսյան 63, 42/1 տարածք հեռ. 322080 E-mail: info@irtek.am	Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047 հեռ.650015 E-mail: www.1tv.am
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, կոդ 20500 h/h 2050022009911001	«Արդշինբանկ» ՓԲԸ h/h 2470102796740000
ՀՎՀՀ 01517279	ՀՎՀՀ 01540062
տնօրեն Ռ. Ավագյան Կ.Տ.	գործադիր տնօրեն Մ. Գրիգորյան Կ.Տ.